ՄՈՒՇԵՂ ԱԲԵՂԱ ԲԱԲԱՅԱՆ

ՀԱՎԵԼՈՒՄ ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆԻՆ

Հայ դասական պատմագրության վերջին նշանավոր ներկայացուցիչն է Առաքել Դավրիժեցին, որի կյանքն ու գործունեությունն իր ժողովրդի լուսավորությանը, գիտական ու մշակութային զարգացմանը, նրա ինքնաճանաչողության ու ազգային ինքնագիտակցության բարձրացման գործին անմնացորդ ծառայելու մի փայլուն օրինակ է:

Գնահատելով Դավրիժեցու մեծությունն ու պատմության ընթացքը եւ այն թելադրողներին հասկանալու, ճանաչելու Դավրիժեցու կարողությունը՝ Լ. Բաբայանը համեմատություն է անցկացնում Դավրիժեցու եւ մյուս պատմիչների միջեւ. «Ինչպես Եղիշեն ու Փարպեցին էին իրենց ժամանակին հասկացել Շապուհի՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականության հետապնդած նպատակները, ինչպես Սեբեոսն ու Ղեւոնդն էին հասկացել բյուզանդական կայսր Մորիկի՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականության էությունը, այնպես էլ Առաքել Դավրիժեցին էր խոսրը կերպով ըմբռնել Շահ Աբաս Ա-ի հետապնդած նպատակները, նրա՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականության կործանարարհետեւանքները Հայաստանի ու հայերի ճակատագրի համար»[1]:

Հայ Եկեղեցու պատմության եւ հայ մատենագրության մեջ քիչ բան է հայտնի Առաքել Դավրիժեցու կյանքի ու գործունեության մասին: Ժամանակի մի քանի կցկտուր տեղեկությունների եւ նրա իսկ հիշատակարանի մի քանի մանրամասնությունների ուշադիր ընթերցումից հնարավոր է թերեւս ուրվագծել նրա կյանքի անցած ուղին:

Առաքել Դավրիժեցին ծնվել է Ատրպատականի Թավրիզ քաղաքում, որը կոչվում էր նաեւ Դավրեժ, որից էլ՝ Դավրիժեցի մականունը. «*...գոյով կենդեաւ ի քաղաքէն Թաւրիզու...*»[2]:

Հայտնի չէ պատմիչի ծննդյան ստույգ թվականը, սակայն բոլոր հետազոտողներն էլ համաձայնում են, որ այն XVI դարի վերջին տասնամյակն է[3]: Մենք եւս հակված ենք ընդունելու եւ պաշտպանելու այդ տեսակետը՝ կռվան ունենալով երկու փաստարկ: Նախ՝ արձանագրված է Դավրիժեցու մահվան թվականը՝ 1670, ինչի մասին վկայում է Էջմիածնի միաբանական գերեզմանատան նրա տապանաքարի արձանագրությունը. «Պատմագիրն այս է տապան Առաքել վարդապետի ՌՃԺԹ (=1670)»:

Երկրորդ՝ Դավրիժեցին «Պատմություն»-ը գրելու պատճառներից երրորդի մասին ասում է. «... եւ ես ինձէն իսկ տեսանելով զաւերս Հայաստան աշխարհին եւ զնուազիլն մեր ոյս ազգին եւ զչարութիւն մահմետականաց, կսկծալի մորմոքմամբ այրիւր սիրտ իմ, վասն որոյ յօժարեցայ յարձանագրութեան սոցին»[4]:

Առաջին տեղեկությունը Դավրիժեցու մահվան ստույգ թվականն է: Երկրորդն ավելի

---

1 **Լ. Բարայան,** Դրվագներ Հայաստանի XVI-XVIII դարերի պատմագրության, Երեւան, 1984, էջ 87:

2 **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երեւան, 1990, էջ 501:

3 Տե՛ս **Մ. Արեղյան**, Երկեր, հ. Դ, Երեւան, 1970, էջ 513:

4 **Առաքել Դաւրիժեցի**, էջ 501:

անուղղակի տեղեկություն է՝ հեղինակի իսկ կողմից հաղորդված, որից կարող ենք հետևեցնել, որ Դավրիժեցին պատմության առաջին գլուխներում նկարագրված1603-1609 թթ. ջարդերի, բռնագաղթի ու դրան հետևած կրոնական հալածանքների ականատեսն է եղել:

Այսպես, երբ 1651 թ. Դավրիժեցին հանձն է առնում պատմությունը գրելու, նա իրավունք ուներ բողոքելու, որ «...դիպեցաւ պատահել ինձ այս գործ, ոչ ի ժամանակս առոյգ երիտասարդութեան, այլ յողորմելի ծերութեան, վասն զի ծեր էի»[5]:

Այս արտահայտությանը լրացնելու է գալիս մի այլ փաստ, որտեղ Դավրիժեցին ցավով ու չափազանցությամբ է արտահայտվում իր տարիքի մասին. «...յոյժ ցաւագար մարմնով, եւ ի լուսոյ աչքս պակասեալ եւ ի պնդութենէ ձեռքս թուլացեալ դողայր. սոյնպես եւ յայլոց յամենայն կարողութեանց տկարացեալ»[6]:

Այսպիսի տեղեկությունները բազում են, սակայն բերվածներն էլ, կարծում ենք, բարվարար են եզրակացնելու համար, որ 1650-ական թվականներին Առաքել Դավրիժեցին բավական տարեց էր եւ պատմությունն սկսելիս նա իրավացիորեն կարող էր գանգատվել ու տարիքը պատճառաբանելով՝ առաջարկված աշխատանքից հրաժարվել, իսկ ստանձնելուց հետո էլ շտապել, որպեսզի գործն անավարտ չմնա:

Թեպետ Դավրիժեցին հպանցիկ արտահայտություններով օգնում է մոտավորապես իր տարիքը պարզելուն, սակայն մի տեղեկությամբ տարակարծություն է առաջացնում: Նա իրեն ներկայացնում է Փիլիպպոս Աղբակեցի կաթողիկոսի (1633-1655 թթ.) աշակերտ. «... տէր Փիլիպպոս, ... որ էաք ձեռնասուն աշակերտ նորին», «... յաշակերտութենէ սոյն տեառնս Փիլիպպոսի կաթուղիկոսի»[7], ում մասին, սակայն, վկայում է, թե մահացել է 63 տարեկանում՝ 1655 թվականին. «...եւ ինքն էր վաթսուն եւ երեք ամաց, յորժամ վախճանեցաւ»[8]: Աշակերտ լինելու մասին հիշատակում է նաեւ Դավրիժեցուն ճանաչող Հովհաննես Սարկավագը. «... Առաքեալ վարդապետին, նոյն Փիլիպպոս կաթողիկոսի աշակերտին...»[9]: Վկայություններից ակնհայտ է, որ պատմիչ վարդապետ-աշակերտը հասակակից է եղել պատմության պատվիրատու կաթողիկոս-ուսուցչին, մի հանգամանք, որն իրապես տարակուսանք է հարուցում եւ դժվարեցնում է Դավրիժեցու տարիքը որոշելու մեր փորձը: Դավրիժեցու մոտ, սակայն, նշմարելի է մի իրողություն. աշակերտ-ուսուցիչ հարաբերությունը ոչ թե ըստ տարիքի է, այլ ըստ նվիրապետական աստիճանակարգի՝ կաթողիկոս եւ վարդապետ հարաբերությամբ եւ վարդապետական գավազանի. «... սկսեալ ի Գօշ Մխիթարայ գաւազանաւն՝ որ իջանէ Էջմիածնի դասատունն»[10]:

1587-90 թթ. որպես Դավրիժեցու ծննդյան մոտավոր թվականներ ընդունելով՝ բնավ հակված չենք այն ստույգ ու վերջնական համարելու, քանզի բացառված չէ, որ ապագայում այդ հարցի շուրջ ի հայտ կգան նոր փաստեր ու տեղեկություններ:

Սկզբնական շրջանում Առաքել Դավրիժեցու կենսագրության վերաբերյալ նյութեր հավաքելիս որեւէ աղբյուրում եւ նրան նվիրված ուսումնասիրություններում չհանդիպելով նրա

5 Անդ, էջ 503:
6 Անդ:
7 Անդ, էջ 327, 501:
8 Անդ, էջ 280:
9 «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Վ. Հակոբյան, հ. Գ, Երեւան, 1984, էջ 212:
10 **Դաւրիժեցի**, նշվ. աշխ., էջ 345:

ծնողների եւ հարազատների անունների հիշատակությանը[11]՝ հակված էինք այն մտքին, որ պատմությանը անծանոթ են դրանք: Սակայն Վազգեն Հակոբյանի աշխատասիրությամբ հրատարակված ԺԷ դարի հիշատակարանների Գ հատորում պահպանվել է Դավրիժեցու մի հիշատակարանը, որտեղ ինքն է հայտնում իր ընտանիքի անդամների անունները. «Այլ եւ ի Քրիստոս զմարմնաւոր ծնօղքն մեր, զպապն իմ՝ զԽաչատուր եւ զմամն իմ՝ զՈւստիանէն, զԳրիգորն եւ զԳուլումն՝ եւ զհայրն իմ եւ զմայրն իմ, եւ զեղբայրն իմ՝ զԿիրակոսն, որք են սոքա ննջեցեալք ի Տէր: Իսկ զկենդանիսն մեր՝ զաւագ եղբայրն իմ՝ զՄարտիրոս եւ զնորին որդիքն՝ զՄանուկն եւ զԽաչատուրն՝ եւ զկրտսեր եղբայրն իմ՝ զՆուրիջանն եւ զնորին որդիսն՝ զԳալուստն եւ զՓիլիպոսն,...»[12]:

Համեմատելով Վազգեն Հակոբյանի աշխատության հրատարակության թվականը (1984թ.) մեր ուսումնասիրած գրքերի հրատարակության թվականների հետ՝ տեսանք, որ վերոհիշյալ փաստը հայտնի չէր կարող լինել նրանց, քանի որ ուսումնասիրությունները գրվել էին 1984 թվականից շատ առաջ: Այսպիսով՝ Դավրիժեցու իսկ վկայությամբ, կարող ենք ասել, որ նա տան երկրորդ կամ երրորդ զավակն էր, քանի որ արդեն մահացած Կիրակոս եղբոր մասին, ինչպես մյուս երկու եղբայրների պարագային, չի ասում, թե նա որերորդն էր: Դավրիժեցու գերդաստանի հետագա ճակատագրի մասին ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը նշում է. «Առաքել վարդապետի տունը եւ գերդաստանը մնում են մինչեւ այժմ Թաւրիզում (Ղալայի Ս. Աստուածածին եկեղեցու նրբանցքում) եւ կրում են «Պատմագրեան» ազգանունը»[13]:

Պարզած լինելով Դավրիժեցու ծննդյան, ծնողների եւ հարազատների հետ կապված հարցերը՝ փորձենք ժամանակակիցների մոտ ցրված եւ իր իսկ հաղորդած պատահական տեղեկություններից օգտվելով՝ ներկայացնել այն քիչը, որը հայտնի է նրա հոգեւոր կյանքից, քանի որ հաճախ երկարաբանող եւ դեպքերը մանրամասնություններով ներկայացնող Դավրիժեցին իր մասին սակավախոս է:

Ճգնասեր, գրչությանը նվիրված, ուսանելու եւ ուսուցանելու անսահման սիրով համակված մի անձնավորություն էր, հակառակ որ իր մասին պարսավանքով է խոսում. «... ինձ նուաստի եւ տկարի եւ չանարդի բանի սպասաւորի Առաքեալ կոչելոյ», «նուաստս եւ տրուպս»[14]: Իր իսկ վկայությամբ՝ եղել է Էջմիածնի միաբան, որտեղ ուսանել եւ անցկացրել է կյանքի մեծ մասը. *«գոլով ...ի միաբանութենէ լուսակառոյց աթոռոյն սրբոյ Էջմիածնի, որ եւ ասպէն իսկ սնեալ եւ վարժեալ եւ յաւուրս ծերութեան ժամանեալ...»*[15], *մահվանից հետո էլ իր իսկ կամքով թաղվել Էջմիածնի միաբանական գերեզմանատանը. «նաեւ ակն ունիմ զի ընդ հովանեաւ սորին ամփոփել ի հող, զի թերեւս որ ի սմա խորհրդակատարութեանցն լինիցիմ հաղորդեալ»*[16]:

Իսկ թե ինչպե՞ս եւ ի՞նչ պայմաններում է հայտնվել Էջմիածնում, հայտնի չէ:

---

11 Տե՛ս **Լ. Դաւեղյան**, Առաքել Դավրիժեցու երկը որպես Սեֆյան Իրանի XVII դարի պատմության սկզբնաղբյուր, Երեւան, 1978, էջ 12. **Մ. Արեղյան**, նշվ. աշխ., էջ 513:

12 **Վ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 872:

13 **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երեւան, 1942, էջ 216:

14 Անդ, էջ 409, 501

15 **Դաւրիժեցի**, նշվ. աշխ., էջ 501:

16 Անդ:

Այդ մասին առաջին տեղեկությունը կապված է Մելքիսեթ վարդապետ Վժանեցու անվան հետ, որին Մովսես Տաթեւացի Կաթողիկոսը (1629-1633 թթ.) մոտավորապես 1630 թ. Էջմիածին էր հրավիրել դասավանդելու: Պատմիչը մեծ հիացումով եւ ականատեսի անմիջականությամբ է խոսում Վժանեցու եւ նրա դասախոսությունների մասին. «... իբրեւ զյորձանս ուղխից եւ հեղեղաց ընթանայր բանն ի բերանոյ նորա, յորոյ իմաստութիւնն ամենեքեան ապուշ եղեալ՝ հիանային եւ բաղձային»[17], Վժանեցու շնչի տակ էլ ձեւավորվել են նրա աստվածաբանական եւ փիլիսոփայական հայացքները: Այսպիսով՝ Առաքել Դավրիժեցին 1630 թ. արդեն Սուրբ Էջմիածնում էր: Էջմիածնի վանական դպրոցն ավարտած, Մելքիսեթ Վժանեցու մոտ կրթված, Փիլիպպոս Կաթողիկոսի «աշակերտ» եւ «ձեռնասուն» Դավրիժեցին ձեռք է բերում իմաստուն եւ գիտուն վարդապետի համբավ, դառնում բազմավաստակ ուսուցիչ եւ շուտով ունենում իր աշակերտները: Մի ձեռագիր քարոզգրքում, որի ստացողն Առաքել Դավրիժեցին է, պահպանվել է 1681 թ. մի հիշատակագրություն, որի հեղինակը Դավրիժեցու աշակերտ Ղազար վարդապետ Թավրիզեցին է: Նա գովերգում է իր ուսուցչին՝ նրան կոչելով «երջանիկ ռաբունապետն եւ վերջին պատմագիրն...»[18], որը վկայում է նրա ուսուցիչ, ինչպես նաեւ վերջին պատմագիր լինելու ընդունված կարծիքի մասին:

Էջմիածնում գտնվելու տարիներին թե՛ իր, թե՛ ուսումնակից ընկերների օգտագործման համար բազում դասագրքեր է պատրաստել ու պատվիրել: Դեռ Պատմության համար նյութեր հավաքելու տարիներին նա Ղրիմում Հովհաննես Սարկավագին պատվիրում է ընդօրինակել մի իմաստասիրական ժողովածու իր եւ հաջորդ սերունդների համար. «...զսուտերիս արտաքին գրոյս, որ ունի զումարեալ յինքեան զյոլով իմաստասիրաց զբազմահանճար գիտութիւնս»[19]: Էջմիածնում Հովհաննես դպիրը եւ Ավետիք գրիչը 1648 թ. մի ձեռագիր են ավարտում նրա իսկ պատվերով. «Արդ՝ վերջինս ի բանասիրաց... Առաքեալ անուամբ եւեթ վարդապետ... եւ գրել զԳիրքս Հոգւոց եւ Հրեշտակաց, նաեւ Մեկնութիւն Արարածոց գրոց, հաւաքելով ի մի տուի, առ ի վարժումն եւ յօգուտ բանասէր եղբարց»[20], իսկ այս տողերից փոքր-ինչ հետո խնդրում է հիշել նաեւ «զհոգեւոր եւ զմարմնաւոր աշխատաւորսն իմ»: Սա եւս մեկ ապացույց է, որ Դավրիժեցին վաղուց արդեն իր շուրջն ուներ աշակերտների մի փոքր խումբ, որի մեջ ընդգրկված էին նաեւ Հովհաննես դպիրն ու Ավետիք գրիչը: Մի ուրիշ դեպքում Դավրիժեցին անձամբ է հիշում իր աշակերտ Վարդան Մակվեցուն. «եւ իմ աշակերտ Մակուեցի Վարդան»[21], իսկ մի այլ տեղ՝ «մանաւանդ Վարդան սարկաւագին՝ հոգեւոր որդեկին իմ եւ աշակերտին...»[22]: Վարդան Մակվեցու մասին իմանում ենք նաեւ Դավրիժեցու պատվիրած քարոզգրքի հիշատակարանից, որի պատրաստման համար Վարդանը բազմակողմանի աշխատանք էր կատարել: Ենթադրելի է, որ մեկ այլ հիշատակարանի հեղինակներ Սահակ եւ Աթանաս սարկավագները նույնպես եղել են Դավրիժեցու աշակերտները, քանի որ նրանք Վարդանի ուսումնակից ընկերներն են [23]: Հիշյալ Աթանաս սարկավա-

17 Անդ, էջ 316:
18 **Վ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 871:
19 Անդ,էջ 211:
20 Անդ, էջ 278:
21 **Դաւրիժեցի**, նշվ. աշխ., էջ 345:
22 **Վ. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 872:
23 Անդ, էջ 142-143:

գը Դավրիժեցու Պատմության ընդօրինակողներից մեկն էր նաեւ, որին Պատմության 1896 թ. հրատարակիչը շփոթել է Ավետիս գրչի հետ[24]:

Ժամանակակիցները հիացմունքով են խոսել Դավրիժեցու մասին եւ նրան միշտ դասել են ժամանակի հայտնի եւ կրթված վարդապետների շարքը: Դավիթ Բաղիշեցին իր «Ժամանակագրության» մեջ հիշում է 1655 թ. Հակոբ Դ Ջուղայեցի Կաթողիկոսի օրոք (1655-1680 թթ.) Էջմիածնում գտնվող յոթ այնպիսի վարդապետների, ովքեր եղել են «... սիւնք եկեղեցոյ եւ անօթք հոգոյն սրբոյ, անյաղթ փիլիսոփայք...», որոնց թվում է նաեւ «Առաքել վարդապետ պատմագիրը»[25]: Ուշագրավ է, որ դեռեւս 1655 թվականին, երբ Դավրիժեցին պատմությունը չէր ավարտել, ավելին, նույնիսկ դադարեցրել էր գրելը Փիլիպպոս Կաթողիկոսի մահվան պատճառով, Բաղիշեցին նրան արդեն պատմագիր է անվանում, որը վկայում է, որ Դավրիժեցին «Պատմություն»-ը գրելուց հետո չէ, որ դասվել է ժամանակի նշանավոր եւ հայտնի «եկեղեցու սյուների եւ անհաղթ փիլիսոփաների» շարքը, այլ մինչ այդ էլ նա հայտնի էր որպես այդպիսին: Հենց այն փաստը, որ ժամանակակիցներից շատերը եւ հենց Փիլիպպոս ու Հակոբ Կաթողիկոսները նրան են հանձնարարում, անգամ պարտադրում պատմություն գրել, նշանակում է Դավրիժեցին արդեն ճանաչված էր որպես մատենագիր:

Ստեփանոս Լեհացին, որին Բաղիշեցին հիշում է ի թիվս եկեղեցու յոթ սիւների եւ որն անձամբ ճանաչում էր Առաքել վարդապետին, մի հիշատակարանում Դավրիժեցու մասին գրում է. «... Զայնու ժամանակաւ բազումք էին երեւելիք վարդապետք, քաջաբանք, բանաստեղծք, աստուածային գրոց քաջ գիտունք եւ հմուտք, յորոց մի էր եւ Առաքեալ վարդապետն քաջ ոաբունի եւ վիպասան, որ զժամանակագրութիւնս հայրապետաց եւ թագաւորաց գեղեցկայարմար բանիւք դրոշմեաց եւ իւր յիշատակ անջնջելի եթող»[26]:

Ստեփանոս Լեհացու հիշյալ խոսքերը լոկ գովասանք չեն ուղղված Դավրիժեցու հասցեին: Ո՛չ, այն ամբողջությամբ իրականության արտացոլումն է եւ Դավրիժեցի վարդապետ-պատմիչի գիտական հնարավորությունների ճշգրիտ բնորոշումը: Իրոք, Դավրիժեցին եւ՛ երեւելի վարդապետ էր, եւ՛ քաջաբան էր, եւ՛ բանաստեղծ էր, եւ՛ աստվածային գրերի քաջ գիտակ էր, որի լավագույն ապացույցը նրա «Գիրք պատմութեանցն» է:

Բաղիշեցու եւ Ստեփանոս Լեհացու կարծիքին է նաեւ Զաքարիա Քանաքեռցին, որի վկայությամբ միաբանության բանիմաց վարդապետներից էր «Թաւրիզեցի Առաքեալ վարդապետն՝ որ տեղեակ էր ամենայն պատմագրաց, որ եւ արար զպատմութիւնս աւերման աշխարհիս Արարատեան ի մեծ Շահ-Աբասէն»[27]: Շատ տեղին է Զաքարիայի «տեղեակ էր ամենայն պատմագրաց» արտահայտությունը, որը մեկ անգամ եւս ապացուցում է Դավրիժեցու՝ հայրենի պատմագրությանը քաջատեղյակ ու հմուտ լինելը:

Առաքել Դավրիժեցու գործունեությունն ու եկեղեցական ծառայությունը, սակայն, միայն այսքանով չեն սահմանափակվում:

Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրության»՝ Մատենադարանում պահպանված մի

---

24 Տե՛ս **Հ. Միրզոյան**, Առաքել Դավրիժեցու Պատմության առաջին հրատարակության մասին, «Բանբեր Երեւանի Համալսարանի», 1971, թիվ 2, էջ 190:

25 **Վ. Հակոբյան,** Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ, հ. II, Երեւան, 1956, էջ 361:

26 **Յ. Տաշեան,** Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 716:

27 **Զաքարիա Մարկավագ**, նշվ. աշխ., էջ 4:

ձեռագրից իմանում ենք, որ Դավրիժեցին 1636-37թթ. եղել է Հովհաննավանքի վանահայրը, որից հետո վերադարձել է Էջմիածին[28]:

Իր կամ այլ գրիչների կողմից հաղորդվող հատուկենտ տեղեկություններ կան ցրված նաեւ հիշատակարաններում: Օրինակ, 1659 թ. մի հիշատակարանում նա հաղորդում է, որ վարդապետական եւ եպիսկոպոսության հոգեւոր աստիճաններն ստացել է Փիլիպպոս Կաթողիկոսից. «... տէր Փիլիպոս Կաթողիկոսն սբ. Էջմիածնայ, որ սնուցեալ հասոյց ի յարբունս հասակի, եւ վեհագոյն պատուոյ վարդապետութեան, եւ եպիսկոպոսութեան արժանացոյց զանարժանս...»[29]: Հայտնի չէ, սակայն, թե երբ է վարդապետական աստիճան ստացել: Եպիսկոպոսական օծման մասին 1640 թվականի մի հիշատակարանում այսպիսի տեղեկություն է պահպանված. «Յիշեցէք ի մաքրանուէր մաղթանս ձեր զստացող սորա զտէր **Առաքեալ սրբազնեալ քահանայն, որ եղեւ ի սոյն աւուր եպիսկոպոս**...»[30] (ընդգծ. մերն է- Մ.ա.Բ.): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Էջմիածնի միաբանությունում այդ ժամանակ Առաքել Դավրիժեցուց բացի Առաքել անվամբ այլ հոգեւորականի չենք հանդիպում, ինչպես նաեւ, որ Առաքել Դավրիժեցին իր սովորության համաձայն «ստանում է նաեւ այս գիրքը»՝ կարող ենք եզրակացնել, որ հիշյալ նորաօծ եպիսկոպոսը հենց Դավրիժեցին է:

Պատմության մեջ ցրված կցկտուր խոսքերի հիման վրա կարող ենք ասել, որ նա բազում ճանապարհորդություններ է կատարել թե՛ որպես կաթողիկոսական նվիրակ եւ թե՛ որպես պատմության համար նյութ հավաքող բանահավաք պատմագիր: Այսպիսով՝ առաջին անգամ 1645 թ. Փիլիպպոս Աղբակեցու կողմից ուղարկվում է «ի գործ նուիրակութեան սուրբ Էջմիածնի յաշխարհն Յունաց»[31], երկրորդ անգամ 1658 թ. Հակոբ Դ Ջուղայեցի Կաթողիկոսի կողմից է նվիրակության մեկնում, այս անգամ նախ հունաց կողմերը, ապա եւ Սպահան[32]: Հետեւելով պատմությանը՝ պարզվում է, որ Դավրիժեցին եղել է Նախիջեւանում, Սեբաստիայում, Երուսաղեմում, Ամասիայում, Սպահանում, Ջուղայում, Հալեպում, եւ ինչպես ինքն է գրում. «Ի յոլով երկիրս եւ յաշխարհս...»[33]: Հատկանշական է նաեւ Դավրիժեցու երկու անգամ, այն էլ տարբեր կաթողիկոսների կողմից Հայրապետական նվիրակի պաշտոնում հանդես գալը: Հայտնի է, որ կաթողիկոսների կողմից հիմնականում նվիրակ էին նշանակվում վստահելի, գիտուն եւ կարող հոգեւորականները, որոնք տարբեր տեղերում ներկայացնում էին Կաթողիկոսին եւ Սուրբ Էջմիածինը:

Այսպիսի ճանապարհորդություններն ապագա պատմիչի համար զուր չեն անցնում: Ընդհակառակը, այն ամենը, ինչ նա տեսել էր որպես հասարակ ճամփորդ, ուխտավոր եւ Հայրապետական նվիրակ, հետագայում դառնում են համակարգված ներկայացնելու, վերլուծությունների եւ եզրահանգումների կարոտ առատ նյութ, որը պատմիչի գրչի տակ դառնում է «Գիրք պատմութեանց»:

Տասնմեկ տարիների հոգնատանջ աշխատանքն ու բազում դժբախտությունները չեն

---

28 Տեղեկությունը քաղված է Լ. Դանեղյանի նշված գործից, էջ 13:

29 **Վ. Հակոբյան**, նշվ. աշխ., հ. Գ, էջ 872:

30 **Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան**, ԺԷ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, Երեւան,1978, էջ 806:

31 **Դաւրիժեցի**, նշվ. աշխ., էջ 327:

32 Տե՛ս անդ, էջ 186:

33 Անդ, էջ 502:

կասեցրել պատմիչի ջանքերը՝ ավարտին հասցնելու նվիրական գործը, որի համար չէր խնայում նույնիսկ սեփական միջոցները: Անգամ գրքի ավարտից հետո նա հոգացել է, որ այն քանիցս ընդօրինակվի: 1666 թվականին ընդօրինակված ձեռագրի հիշատակարանում կարդում ենք, որ այն գրվել է «ի մեծ թուականիս Հայոց ՌՃԺԵ... հոգաբարձութեամբ, ծախիւք եւ արդեամբք՝ Առաքեալ վարդապետի, որ է նոյն ինքն այս պատմագրքիս շինօղն եւ արարօղն, Թաւրիզեցի Առաքեալ վարդապետն՝ որ վասն զօրինակն բազմացուցանելոյ եւ գրել զայս գիրքս»[34]:

Առաքել Դավրիժեցուց մեզ են հասել նաեւ մի քանի փաղեր. «Տաղ վասն մահրամայի...», «Տաղ անուշ եւ գեղեցկազան», որի սկզբնատառերը հոդում են «Առաքեալ» անունը[35]:

34 Անդ, էջ 504:
35 Տե՛ս **Հ. Անասյան**, նշվ. աշխ., էջ 1152-53: